ՎԵՐԱՕԾՎԵՑ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՓԱՐՍ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ալափարս գյուղը Հայաստանի այն յուրահատուկ գյուղերից է, որն ունի մի քանի եկեղեցիներ:

ա/ Ս. Վարդան՝ 5-րդ դար

բ/ Ս. Ծիրանավոր՝ 901 թ.

գ/ Ս. Թուխ Մանուկ մատուռ՝ 12-րդ դար

դ/ Ս. Աստվածածին՝ 1891 թ.

Գյուղը ունի 3700 բնակիչ: Ալափարսեցիների նախնիները գաղթել են 1827-1930 թթ. Մակու և Խոյ գավառներից, իսկ մյուս մասը՝ Մուշից, Ալաշկերտից և Վանից:

Մայիսի 9-ին Ալափարս գյուղի բնակչությունը ուրախության արցունքները աչքերին, հուզմունքով ու խանդավառությամբ ականատես եղան երկար տարիների իրենց երազի իրականացմանը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և ձեռամբ առաջնորդ Սրբազան Հոր ու մասնակցությամբ Կոտայքի թեմի հոգևոր դասի վերաօծվեց Ալափարս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցու վերանորոգման բարերարն էր Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը:

Պատարագիչն էր Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը: Սրբազան Հայրը ներկաներին շնորհավորեց Շուշիի և Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի առթիվ՝ իր խոսքում ի մասնավորի ասելով. «Սիրելի ժողովուրդ, այս եկեղեցին քարեղեն կառույց է, բայց որպեսզի այն վերածենք հոգևոր կառույցի՝ Աստծու տան, անհրաժեշտ է, որ մեր ամենօրյա այցելությամբ, աղոթքով այս քարերին կենդանություն հաղորդենք, քարակերտ եկեղեցուց վերածենք հոգևոր եկեղեցու»:

Եկեղեցու օծման արարողությանը մասնակցում էին բարերարը՝ Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը, կառավարության ներկայացուցիչներ, մարզային ու քաղաքային իշխանության ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի բարձր հրամանով Առաքել Սրբազանը Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանին պարգևատրեց Հայոց Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ